ԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՀԱՆԳՍՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Դ. Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Երևանի բնակչության մասսայական հանգստի կազմակերպման խնդիրը այժմ առավել քան երբևէ խիստ կարևորություն է ստացել և սպասում է իր լուծմանը։ Բացի ժամանակակից քաղաքներին բնորոշ ընդհանուր գծերից ու օրինաչափություններից, որոնք պայմանավորված են քաղաքամերձ հանգրստյան գոտիների ստեղծման դժվարություններով, Երևանի համար խնդրի լուծումը բարդանում է հատկապես նրան հարավ-արևելքից և հարավ-արևմուտքից անմիջապես հարող տարածքների անբարենպաստ բնակլիմայական պայմանների պատճառով։ Այդ տարածքների կլիման խիստ ցամաքային է, շոգ ու չոր ամառով, ցուրտ ձմեռով։ Տարածքն անտառազուրկ է, գերիշխում է կիսաանապատային բուսածածկույթը։ Քաղաքը հեռու է ջրային ընդարձակ մակերեսներից։ Նրա տարածքում կենտրոնացված են բազմաթիվ արդյունաբերական, այդ թվում՝ քիմիական ու գունավոր մետալուրգիայի ձեռնարկություններ, որոնք առավել մեծ չափով են աղտոտում քաղաքային մթնոլորտը։

Ստեղծված վիճակը հրամայական պահանջ է առաջադրում ստեղծել մասսայական հանգստի տեղամասեր այն հաշվով, որ հնարավոր լինի բավարարել երևանցիների հատկապես մասսայական հանգստի պահանջարկը։ Հայտնի է, որ այդ տիպի հանգիստը բնութագրվում է որպես առողջ մարդկանց հանգիստ և առողջարանային հանգստի նկատմամբ ունի տեսակարար մեծ կշիռ։

Երևանի բնակչության համար առանձնահատուկ նշանակություն ունի մասսայական հանգստի ձևերից մեկի՝ կարճատև հանգստի կազմակերպման խնդիրը։ Դա բացատրվում է նրա մեծ մասսայականությամբ, մարդու ամենօրյա կորցրած ուժերի վերականգնման խնդրին ավելի մոտ կանգնած լինելով։ Ազատ ժամանակի ընդլայնմանը զուգընթաց կարճատև հանգիստը ձեռք է բերում որակական նոր հատկանիշներ։ Հնարավորություններ են ընձեռվում շաբաթվա վերջում դուրս գալու քաղաքից երկու լրիվ օր՝ երեք գիշերումով։

Աշխարհագրական առումով կարճատև հանգստի կազմակերպման հարցը հետաքրքրություն է ներկայացնում նրանով, որ դա հանգստի այն ձևն է, որը բնական հատուկ (հանգստյան) ռեսուրսների և որոշակի տարածքային կազմակերպման կարիք ունի։

Ելնելով խնդրի խիստ կարևորությունից, Երևանի պետական համալսարանի տնտեսական աշխարհագրության ամբիոնի նախաձեռնությամբ, սկսած 1969 թ. ուսումնասիրվում է «Երևանի բնակչության մասսայական հանգստի կազմակերպումը, հանգստյան տեղամասերի ընտրության, օբյեկտների տարածքային տեղաբաշխման և հանգստյան համալիրների կառուցման առաջարկների մշակումը» թեման։

Նախքան բուն պրոբլեմին անցնելը, անհրաժեշտ էր նախապես լուծել երկու կարևոր ելակետային խնդիր. ա) մասսայական հանգստի նկատմամբ բնակչության ունեցած պահանջարկի որոշումը՝ կախված նրանց սոցիալ-դեմոգրաֆիական բնութագրից, բ) հանգստյան տարածքների ռեկրեացիոն պոտենցիալի տնտեսաշխարհագրական բնութագիրը։ Կարևոր էր ձեռքի տակ տվյալներ ունենալ Երևանի բնակչության հանգստի ներկա վիճակի մասին, հանգամանք, որն ըստ էության, ելակետային նշանակություն ունի նշված խնդիրների լուծման համար։ Այն հնարավոր եղավ ձեռք բերել միայն մի եղանակով՝ մասսայական և սոցիոլոգիական ուսումնասիրություններով։

Նշենք, որ պաշտոնական, այդ թվում նաև կենտրոնական վիճակագրական վարչության տվյալները կարող են քիչ թե շատ պարզել միայն կազմակերպված հանգստի վիճակը։ Մինչդեռ հանգստի մեկ այլ ձևի՝ անկազմակերպ հանգստի մասին նրանք բացարձակ ցուցանիշներ տրամադրել չեն կարող։ Չունենալով այդպիսի ինֆորմացիա, հնարավոր չէ ըստ ամենայնի կանխորոշել բնակչության պահանջարկը հանգստի ցանկացած տեսակի նկատմամբ, առավել ևս՝ սկսել քաղաքամերձ գոտու յուրացումը հանգստի նպատակներով։

Էական սխալներից խուսափելու համար սոցիոլոգիական ուսումնասիրություններն ավանդական ձևով (հարցաթերթիկների ցրմամբ) չկատարվեցին. Նպատակահարմար համարվեց համալսարանի ուսանողության միջոցով հաճախել երևանցիների բնակարանները և հարցաթերթիկները լրացնել հենց տեղում*։ Այս եղանակով հարցման են ենթարկվել քաղաքի բնակչության մոտ 10%-ը (80 հազար երևանցիներ)։ Կուտակված հարուստ նյութը ենթարկվել է մեքենական մշակման, խմբավորվել աղյուսակների ձևով և հրատարակվել[1]։ Աղյուսակների քանակն անցնում է 90-ից՝ յուրաքանչյուրում միջին հաշվով 148 թվային ցուցանիշ։ Այդ թվերն արտացոլում են Երևանի բնակչության մասսայական հանգստի իրական պատկերը՝ նրա սոցիալ-տնտեսական և աշխարհագրական տեսանկյունից։

Դրանց ուսումնասիրությունը թույլ է տալիս կանխորոշել հանգստացողների պահանջարկի հիմնական տենդենցները և կոնկրետ հետազոտությունների հիման վրա հիմնավոր առաջարկություններ անել հանգստի արդյունավետ կազմակերպման վերաբերյալ։

Ուսումնասիրության արդյունքները հատուկ հետաքրքրություն են ներկայացնում նաև աշխարհագրական առումով։ Զուտ աշխարհագրական ինֆորմացիայից բացի սոցիալ-տնտեսական բնույթի շատ նյութեր պարունակում են նաև փաստեր, որոնք ուղղակի կամ անուղղակի արտացոլում են այս կամ այն աշխարհագրական երևույթը։ Անհրաժեշտ ենք համարում հոդվածում առանձնացնել աշխարհագրությանը վերաբերող հարցերը և դրանք քննարկել սոցիալ-տնտեսական ֆոնի վրա։

Ահա այդ հարցերը.

---

* Հոդվածը գրված է սոցիոլոգիական այդ ուսումնասիրության տվյալների հիման վրա։

[1] «Организация отдыха населения города Еревана» (Итоги социологических обследований). Ереван, 1973.

Հանգստացողների տեղաբաշխումը ըստ հանգստյան գոտիների։ Հանգստացողների տեղաբաշխվածությունն ըստ տարածքային տիպերի։ Հանգստացողների տեղաբաշխվածությունն ըստ Երևանից ունեցած հեռավորության։ Հանգստի սեզոնային բնույթը։ Հանգստյան գոտու սպասարկման մակարգակը։

Ակնարկեցինք, որ ՀՍՍՀ-ն ունի հանգստի հզոր ռեսուրսներ և ՍՍՀՄ-ում զիջում է միայն սևծովյան առափնյա գոտուն, թեև իր մի քանի յուրահատկություններով նույնիսկ գերազանցում է վերջինիս։ Այսպես, օրինակ, տարվա ընթացքում պարզ օրերի թվով Հայաստանը զգալի գերակշռություն ունի Սև ծովի առափնյա գոտու նկատմամբ։ Լեռնային առողջարար օդը, բուժիչ աղբյուրները, արեգակնային ինտենսիվ ճառագայթումը նույնպես առավելություններ են, որոնցով օժտված է հանրապետության տարածքը։

Չնայած այս բոլորին, երևանցիների միայն 1/3-ը է իր հանգիստն անցկացնում հանրապետությունում։ Մյուս մասը երկարատև հանգստի է մեկնում հանրապետության սահմաններից դուրս։ Ստացվում է, որ գոյություն ունի համապատասխան պահանջարկ՝ իր երկու կողմերով. մեկը, այսպես ասած, «զնողունակությունը» կամ հանգստացողների նյութական հնարավորություններն ու ազատ ժամանակը, իսկ մյուսը՝ «որոշակի ապրանքով» կամ հանգստի համար պիտանի տարածք, բայց սպառողն իր պահանջմունքները բավարարում է հանգստյան այլ գոտում։ Տնտեսական առումով սա անցանկալի երևույթ է, որը կապված է նյութական միջոցների և ժամանակի լրացուցիչ ծախսումների, ինչպես նաև տրանսպորտային ծանրաբեռնվածություններ ստեղծելու հետ և այլն։

Ուսումնասիրությունները բերեցին այն համոզման, որ գոյություն ունեցող հանգստյան սիստեմը հեռու է կատարյալ լինելուց, որով և պայմանավորված է վերոհիշյալ հակասությունը։ Օրինակի համար վերցնենք թեկուզ սպասարկման մի օղակը՝ Երևանի հանգստյան գոտիներում եղած գիշերատեղերի քանակը և հանգստացող երևանցիներին բավարարելու նրանց հնարավորությունները։

Ի դեպ, գիշերատեղերի հարցը սպասարկման ոլորտում, մեր կարծիքով, առաջնային է սպասարկման մյուս օղակների համեմատ, որովհետև, եթե երկարատև հանգստի մեկնողների վրա, օրինակ, տրանսպորտային անհարմար պայմաններն անդրադառնում են միայն մեկնելու և վերադարձի օրերին, մի բան, որ կարելի է միշտ էլ զոհել երաշխավորվող լավ հանգստի դեպքում, մինչդեռ գիշերատեղի բացակայությունը ուղղակի կնշանակեր նաև հանգստի այդ կարևոր ձևի խափանում։

Պաշտոնական տվյալների համաձայն, 1970 թ. հանրապետությունում կար 27 առողջարան և հանգստյան տուն[2]։ Արտաքաղաքային պիոներական ճամբարների հետ միասին մահճակալների թիվը հավասար էր 7350-ի՝ միաժամանակյա տարողությամբ։

Սոցիոլոգիական ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ միայն հանրապետության ներսում հանգստացող երևանցիները կազմել են բոլոր մեկնողների 35%-ը, կամ 106.400 մարդ։ Միաժամանակ նրան-

2 «ՀՍՍՀ ժողովրդական տնտեսությունը 1970 թվականին», Երևան, 1971, էջ 199։

ցից յուրաքանչյուրը հնարավորություն է ունեցել միջին տևողությամբ հանդիստանալ 29,3 օր։ Հետևաբար նրանց հանգստի պոտենցիալը 1970 թ. համար կազմել է 108.400×29,3=3.117.520 մահճակալ-օր, իսկ մահճակալ-օրերի այդ պահանջարկը հնարավոր կլինի բավարարել առնվազն՝ 3117520:365 օր= 8542 մահճակալ՝ միաժամանակյա տարողության դեպքում։ Այստեղից երևում է, որ նույնիսկ այն դեպքում, երբ պայմանականորեն անտեսել ենք բազում համահարաբերական գործոններ, որոնց հաշվի առնելիս պահանջվող մահճակալների քանակն անհամեմատ կմեծանար, դարձյալ հիմնական հակասությունն ակներև է։ Այն է, պահանջարկը մեծ է առաջարկից։

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ երևանցի հանգստացողների համար անհետաձգելի խնդիր է դառնում հանգստի մի ամբողջ բնագավառի՝ սպասարկման ոլորտի արմատական վերակառուցումը։

Աղյուսակ № 1

Ս՝ասսայական հանգստի մեկնողների տեղաբաշխումը ըստ հանգստյան գոտիների (100 մեկնածների հաշվով)[3]

Երևանի հանգստյան գոտիներ	Երկարատև հանգիստ			Կարճատև հանգիստ	
	1969 թ.	1970 թ.	1971 թ.	1972 թ. ամռանը	1972 թ. ամռանը
Սևան—Հրազդան	8,1	9	10	51	31
Լոռի—Փամբակ	8,1	7	7	9	6
Դիլիջան	3,6	4	4	2	2
Հանր. մյուս շրջ.	12,6	15	13	32	52
Սևծովյան շրջան	31,8	30	27		
Հյուսիսային Կովկասի հանքային շրջան	9,6	0	7		
Մերձբալթիկա	3	3	5		
Այլ հանրապետութ.	20,6	20	22		
Արտասահման	2,6	3	5		
	100	100	100	100	100

Ուսումնասիրություններից պարզվում է, որ 1969 թ. հանգստյան գոտիներ մեկնող 100 երևանցիների ավելի քան 34%-ը հանգիստն անց է կացրել Միության առափնյա գոտիներում։ Այդ թվում Սև ծովի ափերին՝ 31,8 մարդ։ Իսկ Բալթիկ ծովի առափնյա գոտում՝ 3 մարդ։ Այսպիսի համամասնությունը կայուն է նաև հետագա 2 տարիների համար (աղյուսակ № 1)։

Այն փաստը, որ երևանցիների երկարատև հանգստի ամենալայն մասսայականությունը վայելող գոտին գտնվում է հանրապետության սահմաններից դուրս, նույնպես նորմալ համարել չի կարելի, քանի որ առկա են բոլոր պայմանները բնակչության հանգիստը հիմնականում հանրապետության ներսում կազմակերպելու համար։ Մենք դրանով, իհարկե, չենք պնդում, թե ստեղծելով հանգստյան հզոր ռեսուրսներին համապատասխան սպասարկող բարձր

[3] «Организация отдыха населения города Ереван», стр. 34.

մակարդակ, հնարավոր է ամբողջապես կազմակերպել Երևանի բնակչության երկարատև հանգիստը հանրապետության սահմաններում։ Այդ չենք կարող պնդել նախ այն պարզ պատճառով, որ ՀՍՍՀ-ն կապված չլինելով (խոսքն անմիջական կապի մասին է) ծովերի ու խոշոր դետերի հետ, զրկված է հանդրստի մի շատ կարևոր տեսակի լիարժեք կազմակերպման հնարավորությունից։ Մասամբ դրանով է բացատրվում հանգստացող երևանցիների կենտրոնացումը առափնյա գոտիներում, առաջին հերթին՝ Սև ծովի ափերին։ Այնուհետև, հարկ է նշել, որ ժամանակակից հանգիստը չի բնութագրվում միայն աղատ ժամանակի անընդհատ աճով. այն շարունակ ընդլայնում է իր սահմանները նաև տարածքային առումով. մի հանգամանք, որը պայմանավորված է նաև բնակչության հոգևոր պահանջմունքներով, որոնք այսօրվա մարդու համար դարձել են ոչ պակաս կարևոր, քան բնության նկատմամբ ունեցած նրա պահանջմունքներն են։

Այսպիսով, խոսքն այն մասին չէ, թե մենք պետք է նպատակ հետապնդենք մեր հանրապետության ջրային ռեսուրսներով բավարարել հանգստի այս տեսակի նկատմամբ եղած պահանջարկը, այլ այն, թե ինչ սահմաններում կարելի կլինի առավելագույն չափով օգտագործել եղած ռեսուրսները, որպեսզի հնարավորության սահմաններում կարողանանք մեղմացնել հանգստի գոյություն ունեցող անհամաչափ տեղաբաշխվածությունը։

Այս տեսակետից մեր հանրապետության ամենախոշոր բնական ջրամբար Սևանը և մյուս բնական ու արհեստական ջրամբարները իրենց հանգստյան հնարավորություններով մասամբ կկարողանան բավարարել հանգստի այդ տեսակի պահանջարկը, բայց երբեք չեն փոխարինի Սև ծովի առափնյա գոտուն։ Գտնվելով մեծ բարձրության վրա, Սևանը ջրային հանգստի կազմակերպման լիարժեքության առումով (նկատի ունենք ջրային, արեգակնային, լոգանքների, լողի, նավակային զբոսանքների համար նպաստավոր պայմանների տևողությունը) զգալիորեն զիջում է Սև ծովի ափերին։

Այսպես, ՍՍՀՄ-ում գոյություն ունեցող նորմավորմամբ, օրինակ՝ ջրային լոգանքի և լողի համար պահանջվում է ջրի առնվազն +17 աստիճան ջերմություն, մինչդեռ Սևանի ջրերը այդպիսի և ավելի ջերմություն են ունենում հուլիսի II տասնօրյակից մինչև օգոստոսի վերջը, երբեմն նաև մինչև սեպտեմբերի առաջին տասնօրյակը[4]։ Սևծովյան գոտու ջրի ջերմաստիճանը, օրինակ, Ղրիմի թերակղզու և Սոչիի շրջաններում հունիսից մինչև սեպտեմբեր բարձր է 20 աստիճանից, իսկ առանձին լողափերում այն հասնում է մինչև 30 աստիճանի[5]։ Հետևաբար, սևծովյան գոտին անհամեմատ շատ ժամանակամիջոց կարող է տրամադրել հանգստացողներին։

Համեմատվող ջրային տարածությունների ջերմային պայմանների օրական տատանումները նույնպես զգալիորեն տարբերվում են միմյանցից։ Եթե Սևանի լողափերի ջրերը +17 աստիճան և ավելի ջերմության են հասնում ժամը 15.30-ից և այն պահում մինչև ժամը 18.30-ը, ապա սևծովյան ափամերձ ջրերի ջերմությունը սկսած հուլիսից գիշերներն անգամ +20-ից բարձր է։ Սրանք արդեն ակնառու առավելություններ են։

---

[4] «Гидрологические ежегодники» за 1967—1970 гг., т. 3, вып. 3, Баку.

[5] Е. П. Маслов, Крым, М., 1954, стр. 36.

Այս համեմատությունը գրեթե առանց վերապահության կարելի է անել հանրապետության մյուս ջրային տարածությունների հետ, որոնք գտնվում են ծովի մակարդակից մեծ բարձրության վրա։ Ավելին, հանրապետության արհեստական ջրամբարները (բացառությամբ Ապարանի ջրամբարի) հանգստյան փոքր հնարավորություններով են օժտված, հատկապես ջրային լոգանքների համար։ Դա պայմանավորված է նրանց ստեղծման տնտեսական շարժառիթներով՝ այն սկզբունքով, որպեսզի հնարավորության սահմաններում քիչ մակերես զբաղեցնելով շատ ջուր կուտակել։ Այդ պատճառով էլ խոր հովտային մասերում կառուցվող ջրամբարի կտրտված ու զառիթափ ափերը անհարմար են լոգանքների ու լողի համար, ուստի և կարիք ունեն լրացուցիչ վերակառուցման ու բարեկարգման, մի դժվարություն, որ կապված է նյութական լրացուցիչ ծախսերի հետ։

Ցավոք այս հանգամանքը տնտեսական դրդապատճառներով հաճախ դուրս է մնում մեր նախագծային կազմակերպությունների ուշադրությունից, կամ էլ լավագույն դեպքում դիտվում է որպես երկրորդական խնդիր։ Մինչդեռ կյանքն ստիպում է ընդունելու այն հրամայական պահանջը, որ հետազոտությունների արդյունավետությունը չի կարելի չափել միայն այն պարզ օգուտով, որ անհապաղ կարող է ստանալ ժողովրդական տնտեսությունը։

Ուշագրավ են ձեռք բերված այն տվյալները, որոնցում արտահայտված են երևանցիների մտադրությունները 1972 թ. հանգստյան վայր ընտրելու կապակցությամբ։

Աղյուսակ № 2

Երևանցիների կողմից հանգստյան վայրերի ընտրությունը 1972 թ.[6]
(մտագրվել են հանգստանալ)

Դրական պատասխանողներ	Այդ թվում մտադիր են իրենց հանդիստն անցկացնել			
100%	Հանրապետության գոտիներ	Երևանում	Հանրապետության սահմաններից դուրս	Որից Սև ծովի ափերին
100%	19,8%	27,4%	52,6%	30%

Ինչպես երևում է աղյուսակից, հարցման ենթարկված երևանցիների մեծ մասը 1972 թ. մտադիր են եղել իրենց հանգիստն անցկացնել հանրապետության սահմաններից դուրս՝ առավելապես սևծովյան առափնյա գոտում։ Այդ հանգամանքը չի կարելի բացատրել միայն դեպի ծովն ունեցած պահանջմունքներով։ Ազատ ժամանակն արդյունավետ օգտագործելու համար հանգստացողին անհրաժեշտ է իր նյութական և ժամանակի յուրաքանչյուր միավորի դիմաց վայելել ոչ միայն բնության ընձեռած լավ հնարավորությունները, այլև ունենալ հարմար գիշերատեղ, ազատ լինել սննդի և այլ հոգսերից։ Այս տեսակետից Սև ծովի առափնյա գոտին իր բնակլիմայական պայմանների մի շարք առավելությունների կողքին ունի նաև սպասարկման բնույթի ավելի մեծ հուսալիություն, քան մեր հանրապետությունը։

[6] «Организация отдыха населения города Ереван», стр. 87.

Այս առումով կարևորություն է ստանում, անշուշտ, այն հարցի պարզաբանումը, թե ինչպիսին է մեր հանրապետության հանգստյան գոտիների սպասարկումը։ Հարցին պատասխանելու համար վերցնենք միմյանցից տարբերվող երկու գոտիներ. առաջինը հանգստի լավ ռեսուրսներով և համեմատաբար բավարար սպասարկման մակարդակով, իսկ մյուսը՝ դարձյալ հանգստի լավ ռեսուրսներով, բայց սպասարկման թույլ մակարդակով։ Սոցիոլոգիական նշված հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ նման շրջաններ կարելի է համարել առաջինը՝ Սևան—Հրազդանի, իսկ մյուսը՝ Դիլիջանի գոտիները։

Հանրապետության ներսում ամենամասսայականությունը վայելողը Սևան—Հրազդանն է, ուր 1971 թ. կենտրոնացված էր երկարատև հանգստի մեկնող երևանցիների 10%-ը կամ հանրապետության տարածքում նույնանման հանգստի մեկնող երևանցիների 24%-ը, ինչպես նաև իրենց կարճատև հանդիսատն անցկացնողների կեսից ավելին ձմռանը և 31%-ը՝ ամռանը։

Ինչով է բացատրվում նման պատկերը։ Առանց տատանվելու կարելի է ասել, որ հանգստացողների կենտրոնացումը Սևան—Հրազդան գոտում պայմանավորված է հանգստի բազմազան տեսակների ու տիպերի կազմակերպման լայն հնարավորություններով։ Սա այն գոտին է, որն ընդգրկում է Երևանից հյուսիս ընկած բարձրությունները, ընդհուպ մինչև բարձր լեռնային մարգագետինները։ Տարածքի զգալի մասը ծածկված է հանգստի համար լավագույն պայմաններ ունեցող սաղարթախիտ անտառներով, ունի զով ամառ և չափավոր ցուրտ ձմեռ։ Սևան—Հրազդան գոտին հանրապետության մյուս հանգստյան գոտիների համեմատ ավելի լավ է ապահովված ջրային ռեսուրսներով։ Այստեղ է գտնվում Սևանը, նրանից սկիզբ առնող Հրազդանն իր վտակներով։ Վերջիններս հոսում են գեղատեսիլ կիրճերով, որոնք հանգստի մեծ պայմաններ ունեն։ Այս տարածքը հարուստ է հանքային ջրերով, լեռնային վճիտ աղբյուրներով և կուլտուր-պատմական հուշարձաններով։ Այս ամենը միասին կազմելով բնապատմական մի ամբողջական համալիր՝ դեպի իրեն է ձգում բազմաթիվ երևանցիների։ Պետք է նաև նշել, որ հանրապետության մեջ ունեցած նրա դերը պայմանավորված է նաև Երևանին մոտ գտնվելով և տրանսպորտային միջոցներով ապահովված լինելով։ Բացի այդ, այստեղ է կենտրոնացված մեր հանրապետության առողջարանների՝ հանգստյան տների, սպորտային համալիրների, պիոներական ճամբարների և հանգստյան այլ հիմնարկների զգալի մասը։ Այս բոլորի շնորհիվ Սևան—Հրազդան գոտում ձևավորվում է հանգստի որոշակի սիստեմ։

Մեզ հետաքրքրող մյուս գոտին Դիլիջանն է։ Այն գտնվում է ծովի մակարդակից 1250—1510 մ բարձրության վրա։ Կլիման մեղմ է, լեռնա-անտառային տիպի, չափավոր զով ամառով, տաք ու չոր ձմեռով։ Դարավոր անտառները, հանքային բուժիչ աղբյուրները և պատմական հարուստ հուշարձանները թույլ են տալիս այս գոտին վերածելու բնակչության մասսայական հանգստի լավագույն շրջաններից մեկի։ Սակայն առ այսօր այս գոտին դիտվում է միայն որպես կուրորտա-առողջարանային համալիր։ Մինչդեռ Երևանի նկատմամբ ունեցած նրա հարմար աշխարհագրական դիրքը և բարեկարգ ճանապարհները հնարավորություն են տալիս այստեղ այցելել ոչ միայն բուժվողներին ու երկարատև հանգստի մեկնողներին, այլև նրանց, ովքեր կուղե-

նային շաբաթվա աշխատանքից ազատ օրերն անցկացնել բնության այս շռայլ անկյունում։

Ուսումնասիրությունները պարզում են, որ այս գոտին գանդաղ է զարգանում։ Այսպես, 1969 թ. երևանցի երկարատև հանգստացողների միայն 3,6%-ն է հանգստացել տվյալ գոտում, 1970—1971 թթ.՝ 4%-ը[7]։ Կասկած լինել չի կարող, որ նրա՝ որպես հանգստյան գոտու դանդաղ զարգացումը պայմանավորված է ոչ թե բնակլիմայական պայմաններով, այլ բնակչության սպասարկման ցածր մակարդակով. առաջին հերթին՝ գիշերատեղերի խիստ պակասով։ Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ կարճատև հանգստի մեկնող երևանցիների 2%-ն է հանգիստն անցկացրել Դիլիջանի հանգստյան գոտում։ Այն դեպքում, երբ նույն ձևով հանգստացողների 51%-ը հանգստացել է Սևան—Հրազդանում, իսկ 9%-ը Լոռի-Փամբակում։

Եթե Սևան—Հրազդանում կարճատև հանգստի մեծ կենտրոնացումը հասկանալի է և լրացուցիչ մեկնաբանության կարիք չունի, ապա, ընդհակառակը, Դիլիջանի և Լոռի-Փամբակի գոտիներում հանգստացողների մասին եղած տվյալների շոշափելի տարբերությունը իրոք, կարիք ունի լրացուցիչ պարզաբանման։ Հայտնի է, որ կարճատև հանգստի կազմակերպման համար առաջին հերթին անհրաժեշտ են բնակլիմայական բարենպաստ պայմաններ ունեցող տարածք, համեմատաբար ավելի փոքր հեռավորություն և տրանսպորտային կատարելագործված սպասարկում, ապա նոր միայն մյուս անհրաժեշտ պայմանները (դիշերատեղի, սննդի հասարակական օբյեկտներ և այլն)։ Այս տեսակետից հիշյալ գոտիներն իրենց բնակլիմայական պայմաններով շատ ընդհանուր կողմեր ունեն. հետևաբար, հանգստյան վայրերի ընտրության հարցում էական շեղումներ լինել չեն կարող։ Թերևս միակ տարբերությունը, որ աչքի է ընկնում, Երևանից ունեցած նրանց հեռավորության մեջ է։ Դիլիջանի գոտին ավելի մոտ է Երևանին, քան Լոռի-Փամբակինը։ Տրամաբանորեն ճիշտ կլիներ ենթադրել, որ Դիլիջանում կարճատև հանգիստն անցկացնող երևանցիների ցուցանիշներն ավելի բարձր պիտի լինեին, մինչդեռ առաջին աղյուսակի տվյալները հակառակն են ասում։ Այդ դեպքում, մնում է ենթադրել, որ եղած հակասությունը պետք է փնտրել հանգստի սպասարկման ոլորտում։

Ապացուցման համար փորձենք հաշվարկել այդ գոտում եղած մահճակալային ֆոնդից այստեղ հանգստացող երևանցիներին բաժին ընկնող մահճակալների քանակի և նրանց պահանջարկի միջև եղած տարբերությունը։ Երկարատև հանգստի մեկնող 304 հազար երևանցիների 4%-ը կամ 12120 մարդ, 1971 թ. մեկնել են Դիլիջանի շրջան։ Դրա հետ միաժամանակ սոցիոլոգիական ուսումնասիրությունների տվյալները վկայում են, որ այս գոտում արձակուրդային օրերի օգտագործման գործակիցը շատ բարձր է եղել՝ կազմելով 29,3 օր։ Դա նշանակում է, որ այս գոտում հանգստացող երևանցիների գիշերման պոտենցիալ պահանջարկը կազմել է 12120×29,3=355116 մահճակալ-օր, որի բավարարման համար կպահանջվեր 973 մահճակալ՝ միաժամանակյա տարողությամբ։

Այս հաշվումները, սակայն, դեռևս չեն կարող լիովին արտացոլել երևանցիների գիշերման պոտենցիալ պահանջարկը։ Հայտնի է, որ իրականում այն

---

7 Տե՛ս աղյուսակ № 1։

պայմանավորված է մի շարք գործոններով, որոնց մեջ հատուկ դեր են խաղում հատկապես հանգստյան սեզոնային լարված ամիսները։

Կարճատև (մասամբ նաև երկարատև) հանգստի մեկնողների մեծ մասը ցանկություն ունի իր արձակուրդն անցկացնել հիմնականում ամռան ամիսներին։ Այս տեսակետից բացառություն չեն կազմում նաև Դիլիջան մեկնողները։ Օրինակ՝ հետազոտություններից պարզվում է, որ այստեղ մեկնող երևանցիների համար շատ բնութագրական է հանգստի սեզոնայնությունը։ Բավական է միայն նշել, որ ամռան երեք ամիսներին հանգստացողները կազմել են ողջ տարվա հանգստացողների 78,6%-ը կամ 9526 մարդ, յուրաքանչյուրը՝ 29,3 օր հանգստանալու բացարձակ հնարավորությամբ[8]։ Հետևաբար սեզոնային լարված ամիսների ժամանակ նրանց գիշերման պոտենցիալ պահանջարկը ավելի մեծ է եղել քան ամբողջ տարվա միջինը և կազմել 9526×29,3=279112։ 790=3101 մահճակալ միաժամանակյա տարողություն։

Պաշտոնական տվյալների համաձայն, 1971 թ. Դիլիջանի գոտում եղած բոլոր հանգստյան տների, առողջարանների ու պիոներական ճամբարների միաժամանակյա տարողությունը կազմել է 1100 մահճակալ[9]։ Իդեալական կլիներ ենթադրել, որ այդ ֆոնդով հնարավոր կլիներ մեկ տարում հանգստացողներին տրամադրել 1100×365=401500 մահճակալ-օր։ Սակայն նույնիսկ այդ դեպքում էլ հնարավոր չէր լինի բավարարել երևանցիների պահանջարկը, որովհետև Դիլիջանի հանգստյան հիմնարկները միայն երևանցիներին չէ, որ սպասարկում են։ Առկա մահճակալային ֆոնդից օգտվում են նաև հանրապետության ու Միության մյուս շրջանների աշխատավորները, որոնք կազմում են այստեղ հանգստացողների 40%-ը կամ, այլ կերպ ասած, նրանց է պատկանում 440 մահճակալ։

Մնացած 660 մահճակալանոց ֆոնդով հնարավոր է եղել բավարարել տարվա ընթացքում այստեղ հաճախող 8222 երևանցու։ Սպասարկումից դուրս է մնացել 3802 մարդ, յուրաքանչյուրը մոտ մեկ ամիս հանգստանալու պոտենցիալ հնարավորությամբ։ Իսկ սեզոնային լարված ամիսներին գիշերատեղեր չունեցողների թիվն անհամեմատ մեծացել է, կազմելով՝ շուրջ 7323 մարդ. յուրաքանչյուրը դարձյալ մեկ ամիս գիշերելու պոտենցիալ հնարավորությամբ։

Այսպիսով, պարզվում է, որ Դիլիջանի հանգստյան գոտու կարևոր օղակներից մեկը՝ գիշերատեղերը հեռու են կատարյալ լինելուց։ Այդ դեպքում մնում է ենթադրել, որ ամռան սեզոնային լարված շրջանում այստեղ հաճախող 9526 երևանցիների ճնշող մեծամասնությունը իրենց հանգիստն անց են կացնում կամ հարազատների ու ծանոթների տներում կամ մասնավոր բնակարաններ են վարձում, որը, ինչ խոսք, հարցի լուծում չէ։

Հանրապետության հանգստյան գոտիների սպասարկման վիճակի մասին բավականաչափ տվյալներ են հաղորդում նաև կարճատև հանգստին վերաբերող աղյուսակները[10]։ Այսպես, օրինակ, կարճատև հանգստի գիշերատեղերից օգտվողներից յուրաքանչյուր 100-ի մասին ներքևում բերվող աղյուսակն ունի հետևյալ պատկերը.

---

[8] «Организация отдыха населения города Ереван», стр. 55.

[9] ЦСУ Арм. ССР. Статистический сборник «Здравоохранение и социальное обеспечение в Арм. ССР за 1967—1971 гг.», а так же ЦСУ Арм. ССР. Статистический сборник «Просвещение и культура», Ереван, 1972, стр. 52.

[10] «Организация отдыха населения города Ереван», стр. 127, 135, 138.

Աղյուսակ № 3

Մեկնողներ	Հյուրանոց	Ծանոթների մոտ	վարձով	Բացօթյա	Սեփական ամառանոց	Չեն բնել
Ամռանը 100	22%	36%	10%	1%	3%	28%
Ձմռանը 100	6%	42%	1%	5%	4%	42%

Աղյուսակից երևում է, որ եղած գիշերատեղերի քանակը շատ հեռու է բոլոր մեկնողների պահանջարկը բավարարելուց։ Անգամ եթե ընդունենք, որ բոլոր վարձով մեկնողների, ծանոթների մոտ գիշերողների և չգիշերողների միայն մի մասը կարիք ունի գիշերելու Երևանից դուրս, ապա դարձյալ պահանջարկը գիշերատեղերի նկատմամբ մեծապես կգերազանցի եղած քանակը։

Հիշյալ աղյուսակից կարելի է թերևս ենթադրել, որ կարճատև հանգստի մեկնողների մեծ մասը հանգստյան վայր են մեկնել ոչ այնքան իրենց նախասիրության, որքան գիշերատեղեր ունենալու նկատառումով։ Այսպես, ամռանը մեկնողների 100-ից 36-ը գիշերել է ծանոթների մոտ, իսկ ձմռանը՝ 42 մարդ։ Այն անձինք, որոնք չեն գիշերել հանգստյան օբյեկտներում, թեև ժամանակի առումով այդ անելու հնարավորությունն ունեցել են, նույնպես մեկնողների մեջ մեծ մաս են կազմում։ Իհարկե դրանով դժվար է պնդել, թե բավարար սպասարկման դեպքում այդ խումբն ամբողջապես կուզենար իր հանգիստն անցկացնել անպայման քաղաքից դուրս գիշերելով, որովհետև դա միայն 2 օրվա ժամանակի ու մարդկանց անձնական հակումներով չի պայմանավորված։ Հայտնի է, որ այստեղ որոշ դեր է խաղում նաև հանգստյան օբյեկտների մոտիկությունը։ Հենց թեկուզ, Ծաղկաձոր կամ Սևան գնալ և վերադառնալը շատ մեծ դժվարություն չի հարուցում, ուստի այդ խմբի մի մասը կարող է և չգիշերել քաղաքից դուրս, բայց, այնուամենայնիվ, 2 օր լինել բնության գրկում։ Այս բոլորով հանդերձ, այնուամենայնիվ, համոզիչ է թվում նաև այն, որ դրանց գոնե մի նկատելի մասը անպայման կուզենար գիշերել հանգստյան որևէ գոտում։ Այն հանգամանքը, որ 100 մեկնողներից 42-ը իրենց տրամադրության տակ ունեցած ժամանակը լիարժեք կերպով չօգտագործված վերադարձել են Երևան, ուղղակիորեն վկայում է ոչ թե հանգստացողների նախասիրության և հանգստյան օբյեկտների մոտիկության, այլ գիշերելու տեղերի բացակայության մասին։

Առանձնահատուկ տեղ է գրավում կարճատև հանգստի մեկնողների տրանսպորտային փոխադրման վիճակը, որը, իրոք, սպասարկման մյուս օղակների համեմատ գերիշխող դիրք ունի։ Այդ հանգամանքը պայմանավորված է հանգստացողների ժամանակի խնայման հակումով, քանի որ կարճատև հանգստի մեկնողն առաջին հերթին ձգտում է կարելուն չափ շուտ հասնել իր նախընտրած հանգստյան վայրը և բնության գրկում լինելու համար երկար ժամանակ ունենալ։

Սոցիոլոգիական նշված ուսումնասիրության տվյալների համադրումից պարզվում է, որ ուղղակի կապ գոյություն ունի հանգստյան վայրերի ընտրության և տվյալ գոտու տրանսպորտային ապահովվածության միջև[11], օրի-

11 Նույն տեղում, էջ 113, 127։

նակ, բաղմատեսակ տրանսպորտային միջոցներով համեմատաբար լավ ապահովված գոտիներում համապատասխանաբար մեծանում է նաև հաճախման պարբերությունը։

Սևան—Հրազդան հանգստյան գոտին, իրավամբ, համարվում է տրանսպորտային լավ պայմաններ ունեցող շրջան։ Այդտեղով է անցնում Երևան—Սևան բարեկարգ մայրուղին, նրանից դեպի հանգստյան օբյեկտներ ձգվող բարեկարգ ճանապարհով՝ ավտոմոբիլային տրանսպորտի բոլոր տեսակների համար։ Հանգստյան այս գոտով է անցնում նաև Երևան—Սևան երկաթուղին։

Հանգստացողներն այստեղ հասնելու համար օգտվել են տրանսպորտային միջոցների համարյա բոլոր տեսակներից։

Աղյուսակ № 4

Տարվա սեզոններ	Սեփական մեքենայով	Ավտոբուսով	Ծանոթների մեքենաներով	Ծառայողական	Պատատակաս	Գնացքով	Մոտոցիկլով	Քառը ձևով
Ձմեռ գարնանային	11%	33%	12%	9%	4%	23%	—	9%
Ամառ աշնանային	24%	28%	12%	13%	11%	9%	1%	2%

Համեմատաբար անբավարար է Դիլիջանի հանգստյան գոտու հետ Երևանի տրանսպորտային կապը։ Նախ, առայժմ բացակայում է երկաթուղային կապը։ Բացի այդ, ճանապարհի Սևան—Դիլիջան հատվածը թե իր բարեկարգությամբ և թե մատչելիությամբ մեծապես զիջում է Երևան—Սևան վերջերս շահագործման հանձնված հատվածին։ Այնուհետև, Երևանն այս գոտու հետ կապող մայրուղու Սևան—Դիլիջան հատվածում գործող երթուղային ավտոբուսները համեմատաբար ավելի քիչ են, քան Երևանից Սևան—Հրազդան մեկնողները, որոնք, ինչպես հայտնի է, մեծ մասամբ իրենց վրա են վերցնում հանգստացողների փոխադրման գործը։

№ 4 աղյուսակից երևում է, որ ամռանը այս գոտի մեկնողները հիմնականում օգտվել են սեփական, ծանոթների, ծառայողական և պատահական մեքենաներից, իսկ ավտոբուսների ծառայությունից օգտվել են յուրաքանչյուր 100 հոգուց՝ 28-ը։

Առաջին հայացքից թվում է, թե առանձնապես մեծ շեղումներ չկան, որ այդպես էլ պետք է լիներ։ Բայց սպասարկման կառուցվածքին ավելի հանգամանորեն ծանոթանալիս, պարզվում է, որ Դիլիջան մեկնող ավտոբուսներից ոչ մեկը, բացառությամբ զբոսաշրջիկներ փոխադրողների, Երևանից հատուկ երթուղով չի մեկնում Դիլիջանի որևէ հանգստյան օբյեկտ, որպեսզի հնարավոր լինի կազմակերպել կարճատև հանգստի մեկնող քաղաքացիների փոխադրման գործը։ Հետևաբար, չժխտելով վերը նշված մեկնողների մեջ ավտոբուսից օգտվող 28 հոգու ցուցանիշի որոշ դերը, այդուհանդերձ այն չի կարելի համարել հանգստյան նպատակին ուղղված տրանսպորտային ծառայություն։

Զգալի սակոս է կազմում պատահական մեքենաներով մեկնողների քանակը (11-ը՝ ամռանը և 4-ը՝ ձմռանը)։ Դա մեկ անգամ ևս վկայում է այն

մասին, որ հանգստի մեկնելու ցանկություն ունեցողների քանակն անհամեմատ ավելի մեծ է, քան հասարակական տրանսպորտի սպասարկման ներկա մակարդակն է։ Հակառակ դեպքում, պատահական տրանսպորտից օգտվողների քանակը պետք է չնչին տոկոս կազմեր։

Ուշադրության են արժանի նաև սպասարկման մեկ այլ օղակի՝ հանգստացողների սննդի սպասարկման մասին եղած տվյալները։ Եթե կարճատև հանգստի գիշերատեղերի կամ տրանսպորտային սպասարկման ընդհանուր մակարդակը ինչ որ չափով արտացոլում է մասսայական հանգստի ընդհանուր պատկերը, ապա սննդի սպասարկման մասին տվյալները չեն կարող թեկուզ մոտավոր չափով արտացոլել նրա վիճակը։ Կարճատև հանգստի մեկնողը, ծայրահեղ դեպքում, իր հետ կվերցնի (մանավանդ, եթե օգտվում է սեփական փոխադրամիջոցից) նույնիսկ իր 2 օրվա սննդի պաշարը և դրանով կլուծի հարցը։ Մինչդեռ այդ նույնն անել չի կարող երկարատև հանգստի մեկնողը։ Հետևաբար, նրա համար գիշերատեղերին հավասար նշանակություն ունի նաև սննդի հարցը։ Բայց նույնիսկ կարճատև հանգստի մեկնողների վիճակն էլ, չնայած վերը կատարված վերապահմանը, հեռու է մխիթարական լինելուց։

Այդ են վկայում կարճատև հանգստացողների սննդի սպասարկման մակարդակի վերաբերյալ հետազոտման արդյունքների տվյալները։

Այսպիսով, ամռանը կարճատև հանգստի մեկնող յուրաքանչյուր 100 մարդուց 31-ը տանից դուրս է եկել սննդի պաշարով, 7-ը օգտվել է հասարակական սննդի օբյեկտներից, 48-ը՝ սնվել է ծանոթների մոտ, իսկ 14-ը՝ պատահական ձևով։ Տվյալներից նաև երևում է, որ եղած սննդի հասարակական օբյեկտների ծառայությամբ հնարավոր է եղել սպասարկել կարճատև հանդրստի մեկնողների ընդամենը 7%-ը, մինչդեռ նրանց ճնշող մասը, փաստորեն, դուրս է մնացել սպասարկումից։ Բնականաբար սպասարկման այս օղակի բավարար մակարդակի դեպքում հանգստացողների մեծ մասը, անկասկած, կօգտվեր նրա ծառայություններից։ Դրա հետևանքով, միաժամանակ ծայրաստիճան կպակասեր սննդի պաշարով մեկնողների, ծանոթների մոտ սնվողների, ինչպես նաև պատահական կերպով սնվողների քանակը։

Կատարված սոցիոլոգիական հետազոտությունների մեջ հատուկ հետաքրքրություն են ներկայացնում այն գոտիները, որոնք գտնվում են հանրապետության սահմաններից դուրս, բայց մեծ մասսայականություն ունեն հանգստի մեկնող երևանցիների շրջանում։ Այդ գոտիների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու, հատկապես, այն գործոնները, որոնք խթանիչ դեր են խաղում հանգստի որոշակի մասսայականություն վայելող ձևերի կազմակերպման գործում։ Այս հարցի պարզաբանումով, համադրման մեթոդի օգնությամբ, հնարավոր է դառնում պարզել մեր հանրապետության գոտիներում եղած թերությունները և կատարելագործել դրանք։

Այսպես, օրինակ, № 1 աղյուսակից երևում է, որ Հյուսիսային Կովկասում 1969 թ. հանգստացել են երևանցի հանգստացողների 9%-ը, այսինքն՝ ավելի շատ, քան Լոռի-Փամբակում և ավելի քան կրկնակի անգամ շատ, քան Դիլիջանի շրջանում։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ իրենց բնակլիմայական պայմանների տեսակետից այս համեմատվող գոտիներն ունեն շատ ընդհան-

թություններ (կլիմայի, ռելիեֆի, բուսածածկի, հանքային ջրերի առկայության և այլն)։ Այս ընդհանրության վրա եթե ավելացնենք նաև Դիլիջանի և Լոռի-Փամբակի դոտիների Երևանին մոտ գտնվելու փաստը, ապա մնում է հիշյալ երկու դոտիների միջև եղած տարբերությունը փնտրել սպասարկման ոլորտում։ Այդ տարբերությունն այնքան էական է, որ նույնիսկ Հյուսիսային Կովկասի հանքային ջրերի շրջան մեկնողների համար ավելի գերադասելի է կրել ճանապարհի հետ կապված ծախսերը և դժվարությունները, փոխարենը ազատ լինել սպասարկման հոդսերից, քան հանգստանալ Երևանին մոտիկ որևէ հանգստավայրում, աչքի առաջ ունենալով գիշերատեղի և սննդի հետ կապված դժվարությունները։

Այսպիսով, սոցիոլոգիական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մեզ հետաքրքրող խնդիրների քննումը հանգեցնում է այն հետևության, որ Երևանի բնակչության մասսայական հանգստի կազմակերպման անբավարար վիճակը բնական համալիրով չի պայմանավորվում։ Ավելին, հանրապետության բնակլիմայական պայմանների բազմազանությունը և դրա արդյունքը հանդիսացող հանգստյան հզոր ռեսուրսները թույլ են տալիս պնդելու, որ դրանք կարող են բավարարել ոչ միայն տեղի բնակչության մասսայական հանգստի պահանջները, այլ նաև Հայկական ՍՍՀ-ն դարձնել Միության լավագույն հանգստյան շրջաններից մեկը։

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ОРГАНИЗАЦИИ МАССОВОГО ОТДЫХА НАСЕЛЕНИЯ ЕРЕВАНА

Г. А. МИКАЕЛЯН

Резюме

Неблагоприятные географические условия г. Еревана (жаркий, сухой климат, отсутствие естественных водоемов, низменное расположение большой части города), наличие крупных химических предприятий требуют принятия решительных мер по созданию оздоровительных зон и рациональной организации массового отдыха трудящихся. В связи с этим важное значение приобретает выявление нынешнего положения организации отдыха и мотивов поведения населения в данном вопросе.

Социологические исследования показывают, что основной причиной слабой организации массового отдыха населения Еревана являются не ограниченные природно-рекреационные возможности республики, а, скорее всего, слабое развитие системы обслуживания и в первую очередь— гостиничного хозяйства и питания.